

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Վարդան Մակեյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2016 թվականի
թիվ 29-Ն որոշմամբ

ԳԵՏԱՓ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
<u>1.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ .5	
<u>2.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	22
<u>3.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	23
<u>4.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	23
<u>4.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....	27
<u>5.</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱԾՐԱԳԻՐԸ.....	33
<u>6.</u> ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ.....	34

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ	37
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	38
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ	41
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	42
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՐ	43
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	44
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ `ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿԸ.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Գետափ համայնքի 2016-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համարահանդիսանալու է Գետափի համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

Համայնքի 2016-2020թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Գետափի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն ներառում է նաև Գետափի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Գետափի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Գետափի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրան ձևակերպելով համայնքի ու ժեղևի կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքի նսպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, **ինչպես նաև** ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀԶՀԾ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀԶՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀԶՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխություններին (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ,

Գետափ գյուղը գտնվում է Շիրակի դաշտավայրում, ծովի մակարդակից 17850 մ. բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1827 թ. Արևմտյան Հայաստանի Ղարս Ալաշկերտ Մանազկերտ գավառներից տեղահանված գաղթականների կողմից: Մինչև 1940 թվականը գյուղը անվանվել է Ղասաալու: 1940 թվականին գյուղը վերանվանվել է Գետափ: Գետափի եկեղեցին կառուցվել է գյուղի հիմնադրման տարիներին և համարվում է պատմամշակութային կոթող: Համայնքի վարչական տարածքը կազմում է 704.0 հեկտար: Կլիմայական պայմանները բարենպաստ են հացահատիկային մշակաբույսերի բանջարաբուստանային կուլտուրաների և պտղի արտադրության համար:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 852 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 443 և կանայք՝ 409:

Աղյուսակ 1. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	852
	Տղամարդիկ	443
	Կանայք	409
	0-4 տարեկան	42
	5-6 տարեկան	20
	7-10 տարեկան	35
	11-14 տարեկան	37
	15-17 տարեկան	27
	18-22 տարեկան	72
	23-45 տարեկան	180
	46-62 տարեկան	366
	63 և բարձր տարիքի	73
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	98
	Տարիքային և աշխատանքային	78
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	2

5.	Երկկողմանի ծնողագործական երեխաներ	
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	20
8.	Հաշմանդամներ, այդ թվում`	20
	Մանկուց հաշմանդամներ	3
9.	Աշխատունակներ	420
10.	Զբաղվածներ	450
11.	Գործազուրկներ	150
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	76
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	3
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքներ իրենց, այդ թվում`	56
	Անօթևան ընտանիքներ	
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	40
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	75
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	110

Գետափ համայնքի հիմնական ցուցանիշների գնահատում և կանխատեսում` հավելված 1

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարը և ավագանին: Գետափի համայնքի համայնքապետարանում աշխատողների թիվը կազմում է 9 աշխատակցից՝ ներառյալ տեխնիկական սպասարկում իրականացնող անձիք:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատած՝ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 24-Ա , թիվ 17-Ա որոշումներով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Գետափի համայնքապետարանի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասում և՛ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	155000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	100000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	124000
4.	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ (2.3-1)	1	1	123000
5.	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	110000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
6.	Գրադարանավար	1	1	75000
7.	հավաքարար	1	1	75000
8.	Համակարգչային օպերատոր	1	1	85000
9.	Մշակույթավար	1	1	75000
	Ընդամենը			

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն է համարվում այն գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ
ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝:

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գետափ համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները ներկայացված են **հավելված 3-ում**: Նշված կազմակերպությունների հետ ՏԻՄ-ը համագործակցում է տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 2.2 կմ ընդհանուր երկարությամբ կենտրոնական փողոցները ասվալտապատ են, որի որոշ հատվածներ վերանորոգման կարիք ունի : Գիշերային լուսավորության ցանցը ձգվում է կենտրոնական փողոցների ամբողջ երկարությամբ:

Համայնքում կենցաղային աղբը հավաքվում, տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Համայնքում աղբահանությունը կատարվում է ամիսը 1 անգամ:

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 701.5հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 562.6 հա, բնակավայրերի հողերը՝ 125.8հա, արտադրական նշանակության հողերը՝ 4.43հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 1.28հա, անտառային հողերը՝ 0.0հա, հատուկ պահպանության հողերը՝ 2.18հա, հատուկ նշանակության հողերը՝ 0.0 հա և ջրային հողերը՝ 3.34հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմում է 0.96 հա

Համայնքի հողային հաշվեկշիռն ներկայացված է **հավելված 4**-ում:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում հիմնականում մշակվում են հացահատիկային մշակբույսեր և կերային կուլտուրաներ: Հողատարածքների դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության համար: Հացահատիկային կուլտուրաների, բանջարաբուստանային կուլտուրաների, պտղի արտադրությունը և անասնապահությունը հանդիսանում են Գետափ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտներ: Սակայն այս ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որի պատճառներից է ոռոգման ջրի սակավությունը և ներքին ցանցի քայքայվածությունը, գյուղատնտեսական արտադրության ապրանքների սպառման շուկայի բացակայությունը, դեռ ԽՍՀՄ-ի տարիներին արտադրված ու մինչև օրս շահագործվող գյուղ. տեխնիկայի մաշվածությունը, ինչպես նաև ցրտահարությունը և կարկտահարությունը: Համայնքում նկատելի է մեղվապահության զարգացման տեմպ:

Հավելված 5-ում ներկայացված է համայնքում առկա անասնազլխաքանակի վերաբերյալ տվյալներ:

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- բարեկարգել զբոսայգին
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ

- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գետափ համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ, մայրաքաղաքից՝ 110 կմ: Համայնքը վարչական սահմաններում ունի 2.2կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհ, ավելի քան 6 կմ գրունտային ճանապարհ, ավելի քան 15կմ դաշտամիջյան գրունտային ճանապարհ, 1երկաթբետոնյա կամուրջ, մեկ քարային կամուրջ:: Մարզկենտրոնի հետ տրանսպորտային կապի հաճախականությունը 1-ից 1.5 ժամ, Արթիկ քաղաքի հետ 30 րոպե, մայրաքաղաքի հետ օրական 1անգամ:

Նախատեսվում է համայնքի ասֆալտապատ և գրունտային ճանապարհների ամենամյա վերանորոգման, հարթեցման աշխատանքներ:

Համայնքի բնավիչների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացված են **հավելված 6**-ում:

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գետափ համայնքում առևտրային գործունեություն իրականացվում են անհատ ձեռնարկատերերը: Համայնքի տարածքում բացօթյա առևտրի կետեր կամ շուկաներ չկան:

Համայնքի տարածքում առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են **հավելված 7**-ում:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գետափ համայնքում գործում է <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը: Դպրոցի մասնաշենքը վիճակը գնահատվում է բավարար, դասասենյակները ապահովված են համապատասխան գույքով, լաբորատոր սարքավորումներով ու համակարգչային տեխնիկայով: Դպրոցն ունի վերանորոգման կարիք: Դպրոց հաճախող աշակերտների թիվը կազմում է 78 աշակերտ, ուսուցչական կոլեկտիվի և տեխնիկական անձնակազմի թիվը 26:

1.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օգտագործվում է մշակույթի տան շենքի մի հատվածը որպես խաղասենյակ: Համայնքի ամենամյա մշակույթային միջոցառումների իրականացման տարեկան աշխատանքային պլանի համաձայն իրականացվում են միջոցառումներ:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է <<Գետափի բուժ ամբուլատո կետ >>: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ:

1.14 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 60 բնակիչ աշխատում են պետական, համայնքային կամ մասնավոր կառույցներում, ավելի քան 110 բնակիչ մեկնում են արտագնա աշխատանքի: Համայնքի 76 ընտանիք հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: Համայնքապետարանը հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին: ՏԻՄ-ը հնարավորինս աջակցություն է ցուցաբերում ազգաբնակչությանը աշխատատեղերի ավելացման հետ կապված, որը շատ կարևոր է ազգաբնակչության սոցիալ -տնտեսական վիճակի բարելավման և արտագաղթի տեմպի նվազման հարցում:

1.15 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱԼՄԱՆԸ

Համայնքապետարանը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումն, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդման և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացման նպատակով կատարում է օրենքով սահմանված պարտադիր գործառույթներ: Համայնքապետարանում և համայնքի կենտրոնական հատվածում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը: Ազգաբնակչությունը տեղական ինքնակառավարմանը մասնակցում է ավագանու և համայնքու հանրային բաց լսումների և քննարկումների միջոցով:

1.16 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱԼՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են Համայնքային արագ արձագանքման թիմը, համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Գետափ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոն է համարվում համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ստորաբաժանումները՝ ստորաբաժանման պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է տարհանման պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների

տարման կոմունիկացիոն սխեմաներ: Համայնքում եղած թաքստոցները /նկուղները/ հաշվառված են համայնքապետարանի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացում:
- ✓ Ոռոգման ջրի ներքին ցանցի անբավարար վիճակ, արտաքին և ներքինակապայրային ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- ✓ Գյուղ մթերքների վերամշակման և իրացման դժվարություններ
- ✓ Համայնքի գլխավոր հատակագծի մշակման անհրաժեշտություն
- ✓ <<Գետափի նախդպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի կառուցում:
- ✓ << Գետափ արվեստի դպրոց> ՀՈԱԿ-ի կառուցում
- ✓ << Գետափի մշակույթի տուն>> վերանորոգում
- ✓ միջնակարգ դպրոցի մարզադահլիճի շենքային և գույքային անբավարար պայմաններ
- ✓ Փողոցների գիշերային լուսավորվածության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՂՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Մշակութային հարուստ ավանդույթներ
- ✓ <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի առկայություն
- ✓ Հացահատիկային, բանջարաբուստանային կուլտուրաների, պտղի արտադրության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններ
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Աշխատատեղերի պակաս
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների՝ (փողոցներ՝ երկրորդական և դաշտամիջյան, Ոռոգման ներքին և միջհամայնքային ցանց, համայնքային ենթակառուցվածքի տակ գտնվող շենք-շինություններ) ոչ բավարար վիճակ
- ✓ Բնական աղետներ՝ երկրաշարժ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն, հեղեղներ և ջրհեղեղներ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Գյուղատնտեսական մթերքների վերամշակման, արտադրության խթանման, ընդլայնման և զարգացման հնարավորություն

- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացում
- ✓ Արտադրության խթանում, զարգացում

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական, տարերային աղետների անկանխատեսելի պատճառած վնասներ
- ✓ Գործազրկության մակարդակի աճող տեմպ
- ✓ Արտագաղթ՝ հատկապես երիտասարդ ընտանիքների

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Գետափի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը էլնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է նաև հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Գետափ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության, արտադրության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Գետափ համայնքը սոցիալ - տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է՝ հաշվի առնվելով գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների, արտադրության ոլորտները, ինչպես նաև ազգաբնակչության պոտենցիալ հնարավորությունները:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- ✓ Ապահովել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն

- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բոլոր ռեսուրսները, զարգացնելով առևտրի, արտադրության և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2016-2020թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը
- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու և ռոտզման ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը:
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Ունենալ մարմնամարզական գույքով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Նպաստել գյուղատնտեսության և արտադրության զարգացմանը

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Գալիք 2016-2020թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ՝ պարարտանյութերի, սերմացուների, թունաքիմիկատների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռք բերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ: Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում: Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի քաղաքացիության պաշտպանության պլանի համաձայն, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 6. Համայնքի 2014-2015թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2020թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	15318.0	17345.0	18053.0	20318.0	22502.0	24745.0	26867.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	15318.0	17345.0	18053.0	20318.0	22502.0	24745.0	26867.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	3290.0	3673.0	3745.0	3862.0	3955.0	4069.0	4220.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	1904.0	1637.0	1633.0	1559.0	1559.0	1559.0	1559.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
	Հողի հարկ	1900.0	1633.0	1629.0	1555.0	1555.0	1555.0	1555.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	1350.0	2000.0	2100.0	2215.0	2308.0	2422.0	2573.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1350.0	2000.0	2100.0	2215.0	2308.0	2422.0	2573.00
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	36.0	36.0	12.0	88.0	88.0	88.0	88.0
	Տեղական տուրքեր	36.0	36.0	12.0	88.0	88.0	88.0	88.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար							

	հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	11770.1	13413.5	14069.5	16217.5	18308.5	20437.5	22408.5
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	11770.1	13413.5	14069.5	16217.5	18308.5	20437.5	22408.5
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	11770.1	13413.5	14069.5	16217.5	18308.5	20437.5	22408.5
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ*	258.5	258.5	238.5	238.5	238.5	238.5	238.5
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ							
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	238.5	238.5	238.5	238.5	238.5	238.5	238.5
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							

	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ	20.0	20.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Տեղական վճարներ	20.0	20.0					
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման							

	ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶՀԾ-ի կառավարման կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 16)՝ ընդգրկելու համայնքի 2016-2020թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացուր ապահովելու համար:

Աղյուսակ 7

Հ/հ	Համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը
-----	--------------------	------------------	-------------------------

			(հազ. դրամ)
		ՏԻՄ-երի լիազորություններ	
1	Գետափ	Համայնքապետարանի շենքի հիմնանորոգում	1000,0
2	Գետափ	Կենտրոնական ասվալտապատ փողոցների քայքայված հատվածների նորոգում	1000,0
3	Գետափ	Երկրորդական գրունտային փողոցների խճապատում, հարթեցում	1000,0
4	Գետափ	Ոռոգման ներքին ցանցի կառուցում և վերանորոգում	1000,0
5	Գետափ	Սելավատարերի մաքրում	500,0
6	Գետափ	Փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	1500,0
7	Գետափ	Համայնքի գլխավոր հատակագծի մշակում	1200,0
8	Գետափ	Աղբավայրերում աղբակույտերի ծածկում հողով՝ շրջակա միջավայրի սանիտարական վիճակը չխախտելու համար	500,0
9	Գետափ	Զբոսայգու ծառատնկման կանաչապատման բարեկարգման աշխատանքներ	300,0
10	Գետափ	Խմելու ջրի ցանցի մասնակի նորոգում	1000,0
11	Գետափ	Վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում	500,0
12	Գետափ	ՏԻՄ-երի լիազորություններից դուրս ծրագրեր	
13	Գետափ	Մանկապարտեզի շենքի կառուցում	100000,0
14	Գետափ	Գերեզմանատան պարիսպների կառուցում	3000,0
15	Գետափ	Մշակույթի տան շենքի հիմնանորոգում	260000,0
16	Գետափ	Միջհամայնքային ոռոգման փակ համակարգի կառուցում	Ըստ նախագծի
17	Գետափ	Մարզադահլիճի կառուցում	100000,0

Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Ծրագրերի ցանկը սահմանելուց հետո դրանք գնահատվել են ըստ առաջնահերթության՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- ✓ Համայնքի կարողությունների հզորացում
- ✓ Իրատեսականություն
- ✓ Հրատապություն

Ըստ սահմանված չափորոշիչների ծրագրերը գնահատվել են առավելագույնը 10 բալանոց սանդղակով: Գնահատականները ներկայացված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 8. Պարտադիր իրականացվող ծրագրեր

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Միասնական դաշտի արտաքին ծախսեր
				Շահատուների թիվ	Համայնքի կարողությունների հզորացում	Իրատեսակականություն	Հրատարակում		
1	Գետափ	Կառավարման ապարատի պահպանում	72920.0	X	X	X	X	X	
2									
3									
4	Գետափ	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	4000.0	X	X	X	X	X	
5	Գետափ	Աղբահավաքման աշխատանքների իրականացում	3000.0	X	X	X	X	X	
6	Գետափ	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	33297.0	X	X	X	X	X	

Առաջնահերթ ծրագրերի ընտրություն, համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերի կազմում

Ծրագրերի առաջնահերթությունները սահմանվելուց հետո ընտրվել և համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերում ներկայացվել են ըստ բնակավայրերի առաջնահերթ ոլորտային այն ծրագրերը, որոնք գալիք 5 տարիների կանխատեսվող ֆինանսական միջոցների շրջանակներում հնարավոր կլինի իրականացնել: Ընդ որում, ծրագրերն ի սկզբանե առանձնացվել և ներկայացվել են ըստ հետևյալ խմբերի՝

Պարտադիր իրականացվող ծրագրերն ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Դրանք ի սկզբանե դիտարկվել են որպես առաջնահերթ և պարտադիր կատարման ենթակա: Այս մոտեցումը ցուցաբերվել է ելնելով այն տրամաբանությունից, որ անկախ այս կամ այն բնակավայրի որևէ ծրագրի իրականացման կարևորությունից, համայնքում պետք է գործի աշխատակազմ և հետևաբար պետք է նախատեսված լինեն վերջինիս պահպանության հետ

կապված ծախսեր: Բացի այդ, ի սկզբանե նախատեսվել է, որ համայնքում չեն փակվելու և շարունակելու են գործել նախկինում ծառայություններ մատուցած համայնքային ենթակայության կազմակերպությունները: Հետևաբար վերջիններիս (մասնավորապես ՆՌՀ-երի և երաժշտական դպրոցի) պահպանության հետ կապված ծրագրերը նույնպես դիտարկվել են որպես առաջնահերթ: Համայնքում պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկը ներկայացված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր(Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ)

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2016	2017	2018	2019	2020	Համայնքի բյուջե	Հոնոր կազմակերպություններ	Պետ. բյուջե, լիս
1	Կառավարման ապարատի պահպանում	աշխատող	11	72220.0	12814.0	13074.0	13368.0	14879.0	18085.0	13757,0	-	-
2	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	ընտանիք	80-100	4000.0	1000.0	600.0	600.0	600.0	600.0	10000.0	-	-
3	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (բոլոր բնակավայրերում և համայնքի ընդհանուր վարչական տարածքում)	խմ	1000	3000.0	400,0	400,0	700,0	800,0	700,0	8350,0	-	-
4	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	Ծառայություններ, ապրանքներ	X	33297.0	5283.0	5280.0	5511.0	6724.0	10499.0	76422,3	-	-
Ընդամենը				112517.0	19497.0	19394.0	20179.0	23003.0	29884.0	398042,3	0.0	0.0

Աղյուսակ 10. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր

Հ/հ	Ծրագրի անվանումը	Իրականացման վայրը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումը ստատիստիկների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
						2016	2017	2018	2019	2020	Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Պետ. բյուջե, այլ
1	Խմելու ջրի ցանցի մասնակի նորոգում	Գետափ		X	1000.0	200.0	300.0	300.0	200.0	-	1000.0	-	-
	Համայնքապետարանի շենքի հիմնանորոգում	Գետափ			1000,0		1000,0	-	1000,0		1000,0		
2	Աղբավայրերում աղբակույտերի ծածկում հողով՝ շրջակա միջավայրի սանիտարական վիճակը չխախտելու նպատակով	Գետափ	Խ.մ	500	500.0	-	300,0	200,0	0	0	500.0	-	-
3	Մշակույթի տան շենքի հիմնանորոգում	Գետափ	քմ	1500	260000	-	-	260000					260000
4	Մելավատարների մաքրում	Գետափ	քմ		500,0	-		300.0	200.0		500.0		
5	Փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	Գետափ	գմ	2000	1500,0	300,0	300,0	500,0	400.0	-	1500,0		

6	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	Գետափ	գծմ	5500	1000.0	-	300.0	300,0	400,0	0	1000.0	-	--
7	Կենտրոնական ասֆալտապատ փողոցների քայքայված հատվածների նորոգում	Գետափ	քմ	400	1000.0			1000.0			1000.0	-	-
8	Վարչական շենքի հարակից տարածքի բարեկարգում և կառուցապատում	Գետափ	քմ	300	500.0	-			500.0	-	500.0	-	-
9	Ոռոգման ներքին ցանցի կառուցում և վերանորոգում	Գետափ	հատ	10	1000.0	-		500.0	500.0	-	1000.0	-	-
10	Զբոսայգու ծառատնկման կանաչապատման բարեկարգման աշխատանքներ	Գետափ	քմ	1500	300.0	-				300.0	300.0	-	-
11	Մարզադահլիճի կառուցում	Գետափ	քմ	200	100000					100000.0			100000
12	Միջհամայնքային ոռոգման փակ համակարգի կառուցում	Գետափ											
Ընդամենը Գետափ համայնքի ծրագրերը					406300,0	4000.0	16800,0	275900	4700,0	2700,0	41800.0	0.0	360000

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի (այդ թվում՝ հողերի) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2020 թթ. ընթացքի համար համայնքը չի նախատեսել օտարման ենթակա որևէ անշարժ գույք:

Աղյուսակ 11. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերիկայլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը, 2016-2020թթ.

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն	Տարածքը/ մակերեսը / քանակը (մ ² / հատ)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրի չնեղ	2016	2017	2018	2019	2020	Ենթակալ օտարման, վարձակալության տրամադրման
1.	Վարելահող	Գետափ	21.5հա		Համայնքային սեփականություն	-	-	-	-	-	Վարձակալություն

7. ՀԶՀԾ-ԻԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ

ՀԶՀԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման

համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

ՀԶՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ին տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 12-ում ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 12. ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

Ոլորտ.					
Ծրագիր.					
Միջոցառում.					
Արդյունքային ցուցանիշները		2016 թ., 1-ին կիսամյակ / տարեկան			
տեսակը	անվանումը	այլան.	փաստ.	շեղում	մեկնաբանություն
Մուտքային					
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)					
Արդյունավետության					
Ծախսեր, հազար դրամ					

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի վերահսկումը

ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ապահովում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար: ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝

ՀԶՀԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
ուլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
ուլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում, ՀԶՀԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, խնդիրների և նախատեսված արդյունքների հետ:

ՀԶՀԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի տարեկան և հնգամյա գնահատումը

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարում են համատեղ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն՝ հիմնվելով ՀԶՀԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա:

ՀԶԲԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման ձևանմուշը ներկայացված է աղյուսակ 24-ում:

Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, այնուհետև՝ համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բացլսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով տվյալ բնակավայրին վերաբերող ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

Անցկացված հանրային քննարկումների արդյունքներով, ՀԶՀԾ-ին տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն լրամշակում է ՀԶԲԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության մշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶՀԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀԶՀԾ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իրեն (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓՈՒՄ

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2016-2020թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ իզիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	701.5	701.5	701.5	701.5	701.5	701.5	701.5
2.	Բնակչության թիվը	մարդ	851	859	852	856	866	875	880
3.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը՝ ըստ կառավարման ձևերի (համայնք, համատիրություն, լիազորագրային, հավատարմագրային)	շենք	1	1	1	1	1	1	1
	Ընդհանուր մակերեսը՝ ըստ կառավարման ձևերի	հազ.քմ	193	193	193	193	193	193	193
	Բնակարանների թիվը՝ ըստ կառավարման ձևերի	բնակար.	0	0	0	0	0	0	0
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	163	163	163	165	166	169	172
	Անհատական բնակելի տների մակերեսը	հազ.քմ	196.50	196.50	196.50	198.50	199.50	200.5	202.12
4.	Վթարային շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
5.	Վերելակային տնտեսություն		0	0	0	0	0	0	0
	Վերելակով շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
	Վերելակների ընդհանուր թիվը	վերել.	0	0	0	0	0	0	0
	Գործող վերելակների թիվը	- // -	0	0	0	0	0	0	0
6.	Ավտոտնակների թիվը	հատ	110	110	110	120	123	125	128
7.	Համատիրությունների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
8.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	250	250	260	260	260	260	260
	Այդ թվում՝ բնակչությունից		230	230	240	240	240	240	240

	Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը	հազ.քմ	1,0	1,0	1,0	1,0	1,0	1,0	1,0
9.	Մանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենա-մեխանիզմներ քանակը	միավոր	1	1	1	1	1	1	1
10.	Մանիտարական մաքրման տարածքը	հա	15	15	15	16	16	17	17
11.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	8	8	8	9	9	9	9
12.	Ոռոգելի տարածքի մակերեսը	հա	20	20	20	20	21	22	22
13.	Միջբնակավայրային ճանապարհների երկարությունը	կմ	-	-	-	-	-	-	-
14.	Միջբնակավայրային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	-	-	-	-	-	-	-
15.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	14	14	14	14	14	14.5	14.5
16.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	95	95	95	95	95	96	96
17.	Առևտրի և ծառայությունների Օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	3	3	3	3	3	3	3
	առևտրի օբյեկտներ	հատ	2	2	2	2	2	2	2
	ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ	հատ	0	0	0	0	0	0	0
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
	Գազի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0

20.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	10	10	10	10	10	10	10
21.	Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ	- // -	25	25	25	25	25	28	30
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
	Խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0	0
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	78	78	78	78	78	82	90
24.	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Սովորողների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
25.	Մարզադպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
26.	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0	1
27.	Ակումբների թիվը	հատ	-	-	-	-	-	-	-
28.	Հիվանդանոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Մահճակալների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
30.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	98	98	98	98	98	98	98
31.	Հաշմանդամների թիվը	մարդ	14	14	14	-	-	-	-
32.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	մարդ	200	200	200	200	200	200	200
33.	Գործազուրկների թիվը	մարդ	200	200	200	200	200	200	200
34.	Փախստականների թիվը	մարդ							
35.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	20	20	20	20	20	20	20

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ

Հավելված 2. Գետափ գյուղի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Ծավալ	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման/վերականգնման/փոխարինման կարիք	Այլնշումներ
1.	Համայնքապետարանի շենք	1-ի փողոց թիվ 15			բավարար	անհրաժեշտ է վերանորոգում	Մասնակի վերանորոգվել է 2014թ.
2.	Մշակույթի տան շենք	1-ի փողոց թիվ 15			շատ վատ	անհրաժեշտ է կառուցել	
3.	Հուշարձան հայրենական պատերազմում զոհվածների	1-ի փողոց թիվ 15			բավարար	անհրաժեշտ է վերանորոգել	
4.	Հուշարձան Արցախյան պատերազմում զոհվածների	3-րդ փողոց թիվ 2			լավ		
5.	Մայրուղու լուսավորության ցանց	մայրուղի		2000 զծմ	բավարար	Անհրաժեշտություն կա ընդլայնելու	
6.	Ոռոգման ջրի ներքին ցանց					անհրաժեշտ է վերակառուցել	
7.	Գերեզմանատուն	1-ի փողոց 6-րդ նրբանցք թիվ 16			բավարար		

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Համայնքի անվանումը			Այլ նշումներ
		տեսակը	անվանումը	
1.	ԳԵՏԱՓ	Առողջապահություն	<<Գետափի բուժկետ >>	
2.	Գետափ	Կրթություն	<<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	
	ԳԵՏԱՓ	կապ	<< Հայփոստ>> -ի Գետափի բաժանմունք	

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Համայնքի վարչական տարածքը (հա), որից՝	701.5
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա), այդ թվում՝	562.6
	Արոտավայր	238.7
	Վարելահողեր	307.30
	Խոտհարք	
	Պտղատու այգի	
	Այլ հողեր	1453.0
3.	Բնակավայրերի հողեր (հա), որից՝	125.8

	Բնակելի կառուցապատման	95.8
	Հասարակական կառուցապատման	1.7
	Խտր կառուցապատման	
	Ընդհանուր օգտագործման	13.8
	Այլ հողեր	14.5
4.	Արտադրական նշանակության հողեր (հա)	4.43
5.	Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակառուցվածքի հողեր (հա)	1.28
6.	Անտառային հողեր (հա)	
7.	Հատուկ պահպանության հողեր (հա)	2.18
8.	Հատուկ նշանակության հողեր (հա)	
9.	Ջրային հողեր (հա)	3.34

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից`	451
	Կովեր	206
2.	Խոզերի գլխաքանակը	51
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	134
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	
5.	Ձիերի գլխաքանակը	
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1733
7.	Մեղվարնտանիքների քանակը	28

**ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐ**

Հ/հ	Ցուցանիշները	Շնորհանքներ համայնքում
1.	Մարդատար ավտոմեքենաներ	85
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	5
3.	Կոմբայններ	0
4.	Վարի տրակտորներ, որից՝	2
	Թրթուռավոր	1
	Անվավոր(Կիրովեցներ(
5.	Բեյառուաներ	4

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	համայնքի անվանումը	Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
1.	Գետալի	✓	✓ 1 (մեկ) սննդի խանութ ✓	✓

